Թորոս՝ որդի Կոստանդնի՝ բարեպաշտ և ողորմած, օրինապահ և փիլիսոփայ, եառ զվրէժս 'ի Յունաց սպանողաց զԹագաւորն Գագիկ. եկեղեցիս՝ վանորայս և հիւրանոցս շինեաց, և ռոճիկս առատացոյց: Եառ և ամրոցս Փրանկաց և Յունաց, և կոչեցաւ Թրօդոս Սեւաստոս: Կուարացիք զՅունաց Կիւլիկէն 'ի բաց թողեալ՝ Թորոսի երկիր անուանէին: Նա կացեալ իշխանութեան ամս ԻԳ. վախճանեցաւ, որդի մի մնացեալ սորա, զոր նախանձու աղագաւ անյայտ արարին:

Լեւոն՝ որդի Կոստանդնի և եղբայր Թորոսի՝ եառ զԹարսիս և զՄամեստիա նահանգիւն. 'ի մտանելն սորա զօրքն 'ի ճակատ պատերազմին՝ բրինձփէքն Փռանկաց գովեցին զսա՝ քաջ կոչելով: Սա իշխեաց ամս Ժ.Ե. Իսկ Կայսրն Յունաց Թերբերօժէն ընդ Ահմէտ ամիրային եկեալ 'ի Սիս՝ կալան նենգիւ զԼեւոն՝ Թո-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան